Արձանագրություն N 4

<<ՀՀ ՎԿ-ԲՄԱՊՁԲ-2020/1>> ծածկագրով հայտերի բացման և գնահատման նիստի

ք. Երևան

06 փետրվարի, 2020թ.
ժամը՝ 17:30

Մասնակցում էին՝

Գնահատող հանձնաժողովի նախագահ — Ա. Շահինյան

Հանձնաժողովի անդամներ
/ԳՊ/ԳԱ/՝ — Բ. Գևորգյան
/ԳՊ/ԳԱ/՝ — Ա. Քյոսեյան
/ԳՊ/ԲԱ/՝ — Ռ. Աջամօղլյան
/ԳՊ/ԲԱ/՝ — Ն. Պետրոսյան
Քարտուղար՝ /ԳՊ/Մհմ/ — Լ. Ադամյան

1. <<**ՀՀ ՎԿ-ԲՄԱՊՁԲ-2020/1**>> ծածկագրով ընթացակարգի հայտերը բացվելու էին www.armeps.am համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով, 2020թ.-ի փետրվարի 06-ին, ժամը 17:30-ին, սակայն armeps.am համակարգում ծրագրային խնդրի հետ կապված բացվել են 2020թ.-ի փետրվարի 06-ին, ժամը 18:10-ին:

2. Հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցները.

N	Մասնակցի անվանումը	Հասցե
1	«Յուքոմ» ՓԲԸ	ք.Երևան, Սրբ. Գրիգոր Լուսավորչի 9 շ.
2	«ԷԼՄԱՐԿԵՏ» ՍՊԸ	ք. Երևան, Աճառյան 33/4
3	«Վեգա Ուորլդ» ՍՊԸ	ք.Երևան, Սեբաստիա 141/5

3. Հանձնաժողովը արձանագրեց, որ հրավերի վերաբերյալ հարցումներ չեն ստացվել:

4. Հանձնաժողովը արձանագրեց, որ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ստացվել:

5. Հայտերի բացման արդյունքում արձանագրվեց, որ «Յուքոմ» ՓԲԸ-ի դիմում-հայտարարության /Հավելված 1/ մեջ նշված չէ, թե որ երկրի ռեզիդենտն է համարվում, ինչպես

նաև կցված չէ լիազորագիր, իսկ ապրանքի ամբողջական նկարագիրը /Հավելված 1.1/ թերի է, նշված չէ ապրանքի չօգտագործված լինելը:

«ԷԼՄԱՐԿԵՏ» ՍՊԸ -ի դիմում-հայտարարության /Հավելված 1/ մեջ աղյուսակին հաջորդող նախադասության մեջ մասնակցի անվանման փոխարեն նշվել է <<2>>, իսկ ապրանքի ամբողջական նկարագրի /Հավելված 1.1/ մեջ Ձայնը բնութագրող մասում հստակ չէ, թե որ ձայնային համակարգով՝ Դոլբի Ատմոս կամ Դոլբի և ԴՏՍ Լաբորատորիաների մշակված տարածական ձայնային այլ համակարգերով (օրինակ՝ Dolby Stereo, Dolby Digital Surround, DTS X 3D Surround և այլն):

«Վեգա Ուորլդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրի /Հավելված 1.1/ մեջ նշված չէ ապրանքի չօգտագործված լինելը:

6. Հանձնաժողովը որոշեց 1 աշխատանքային օրով կասեցնել նիստը և «Յուքոմ» ՓԲԸ, «ԷԼՄԱՐԿԵՏ» ՍՊԸ և «Վեգա Ուորլդ» ՍՊԸ-ներին առաջարկել մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

7.<<**ՀՀ ԱԿ-ԲՄԱՊՁԲ-2020/1**>> ծածկագրով գնահատող հանձնաժողովը որոշեց հանձնաժողովի հաջորդ նիստը նշանակել ս.թ. փետրվարի 11-ին, ժամը 11:00-ին, ք. Երևան, Կառավարական տուն 3 հասցեում, 613 աշխատասենյակում:

<< ՀՀ ԱԿ-ԲՄԱՊՁԲ-2020/1>> ծածկագրով հայտերի բացման և գնահատման նիստի շարունակություն

ք. Երևան

11 փետրվարի, 2020թ.
Ժամը՝ 11:00

8. Հանձնաժողովն արձանագրեց, որ սահմանված ժամկետում «Յուքոմ» ՓԲԸ-ի, «ԷԼՄԱՐԿԵՏ» ՍՊԸ-ի և «Վեգա Ուորլդ» ՍՊԸ -ի կողմից շտկվել են արձանագրված անհամապատասխանությունները: «Յուքոմ» ՓԲԸ-ի կողմից ներկայացվել է շտկված դիմում հայտարարությունը /Հավելված 1/, լիազորագիրը և առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը /Հավելված 1.1/, «ԷԼՄԱՐԿԵՏ» ՍՊԸ-ի կողմից՝ շտկված դիմում հայտարարությունը /Հավելված 1/ և առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը /Հավելված 1.1/, իսկ «Վեգա Ուորլդ» ՍՊԸ -ի կողմից՝ առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը /Հավելված 1.1/:

9. Մասնակիցների կողմից առաջարկված գները հետևյալն են.

ՀՀ դրամ

Չափաբաժնի համարը	Գնման առարկայի անվանումը	Չափման միավորը	Քանակը	Գնման առարկայի գնման հայտով հաստատված միավորի գինը	Մասնակցի անվանումը և առաջարկված ընդհանուր գինը *					
					«Յուքոմ» ՓԲԸ		«ԷԼՄԱՐԿԵՏ» ՍՊԸ		«Վեգա Ուորլդ» ՍՊԸ	
					Գնի առաջարկը		Գնի առաջարկը		Գնի առաջարկը	
					առանց ԱԱՀ /ինքնարժեք +շահույթ/	ներառյալ ԱԱՀ	առանց ԱԱՀ /ինքնարժեք +շահույթ/	ներառյալ ԱԱՀ	առանց ԱԱՀ /ինքնարժեք +շահույթ/	ներառյալ ԱԱՀ
1	Համակարգչային պլանշետ	հատ	2546	90000	184375000	221250000	185954800	223145760	180129500	216155400

10. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը և հրավերի 7.6 կետը, **ՀՀ ՎԿ-ԲՄԱՊՁԲ-2020/1** ծածկագրի շրջանակում /գնման ընթացակարգը կազմակերպվել է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա/ հանձնաժողովը որոշեց կասեցնել նիստը և կազմակերպել միաժամանակյա բանակցություններ մասնակիցների կողմից Հավելված 2-ով /գնային առաջարկ/ ներկայացված գների նվազեցման նպատակով: Բանակցությունները տեղի կունենան փետրվարի 17-ին, ժամը 15:00-ին, Կառավարական տուն 3 հասցեում, 6-րդ հարկ, 613 աշխատասենյակում:

<< ՀՀ ՎԿ-ԲՄԱՊՁԲ-2020/1>> ծածկագրով հայտերի բացման և գնահատման նիստի շարունակություն

ք. Երևան

17 փետրվարի, 2020թ.
ժամը՝ 15:00

11. 2020թ. փետրվարի 17-ին ժամը 15:00-ին ՀՀ Կառավարական տուն 3 հասցեում, N 613 աշխատասենյակում կազմակերպվել են միաժամանակյա բանակցություններ <<**ՀՀ ՎԿ-ԲՄԱՊՁԲ-2020/1**>> ծածկագրով ընթացակարգի շրջանակում ներկայացված գնային առաջարկների նվազեցման նպատակով:

12. Բանակցություններին ներկայացել էր «Վեգա Ուորլդ» ՍՊԸ –ի կողմից լիազորված անձը: Բանակցությունների տևողությունը սահմանվեց 10 րոպե: Բանակցությունների արդյունքում «Վեգա Ուորլդ» ՍՊԸ –ի կողմից ներկայացվեց նոր գնային առաջարկ՝ 215900800 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ-ն):

13. Ներկայացված հայտերի հիման վրա <<**ՀՀ ՎԿ-ԲՄԱՊՁԲ-2020/1**>> ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշեց ընտրված մասնակից ճանաչել «Վեգա Ուորլդ» ՍՊԸ-ին, 2-րդ տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել «Յուքոմ» ՓԲԸ-ին, 3-րդ տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել «ԷԼՄԱՐԿԵՏ» ՍՊԸ-ին 1-ին չափաբաժնի մասով:

14. <<Գնումների մասին>> << օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում պայմանագրեր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

15. Ընտրված մասնակցի հետ գնման պայմանագիրը կնքվելու է անգործության ժամկետի ավարտից հետո, օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հանձնաժողովի
Նախագահ՝
ԳՊ/ԳԱՊ ..... Ա. Շահինյան

Անդամներ՝
ԳՊ/ԳԱ ..... Բ. Գևորգյան

ԳՊ/ԳԱ ..... Ա. Քյոսեյան

ԳՊ/ԲԱ ..... Ռ. Աջամօղլյան

ԳՊ/ԲԱ ..... Ն. Պետրոսյան

Քարտուղար՝
/ԳՊ/ՄԻՄ/ ..... Լ. Ադամյան